

U T P U U


L U R T F E



20178

U S L P U S

1935



Ս Ի Ր Ա Ս

Լ Ա Թ Ի Ֆ Ե

ԱՐԵՎԵԼՑԱՆ ՏԵՍԻՆ

24702

A
I
9484



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՑԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1985

Պատ. խմբ. Ե. Զոփուրյան
Տեխ. խմբագիր Տ. Խաչվանյան
Սրբագրիչ՝ Ո. Գասարյան



Պետերատի տպարան
Դրակիր 265, Պատվեր 1000,
Հրատ. 3418, Տիրույթ 3000



ՆՎԻՐՈՒՄ ԵՄ՝
ԶԳԱՑՈՒՄՆԵՐՈՎ ԼԵՑՈՒՆ
ԻՄ ՊԱՅԾԱՌ ԲԱՐԵԿԱՄՈՒՀՈՒՆ

Ինչո՞ւ են նրանք պարուժ,
ե ինչո՞ւ նրանք բուրդովին
ուրախ չեն, յերբ պարուժ
են:

ԿՈՍՏԱՆ ԷԱՄՍՈՒՍ

I

Յերբ հինաւուրց մզկիթի մինարեյի
բաւորակ շրթունքին թառած մոլլայի
բերանից թռալ աղանի վերջին հան-
դը, յերբ հալապայալ իսլամները
հինայած մորուքները շոյելով մզկիթ
մօտն, մենակ Սարդար խանն եր,
վոր այդ ուր վո՛չ մոլլայի աղանն
ուղեց լսել, վո՛չ ել վորեւե ուշադրու-
թյուն դարձրեց մզկիթն շատաւոյ հա-

վատացյալներն ի վրա: Նա մոլեգնած
հայացքով, ակնակապիճներից դուրս
ցցած աչքերով, կատաղորեն անց ու
դարձում եր իր հարեմի ընդարձակ
դահլիճում:

Այնտեղ շարեշար կանգնած էյին
ութը կանայք. 15 տարվա ընթաց-
քում նա մեկ-մեկ ջոկել էր նրանցից
յուրաքանչյուրին, ջոկել էր կրքով,
ջոկել էր նախանձով, ջոկել էր արե-
վելյուս կասկածամտությամբ և այժմ
նա մեկ-մեկ նայում էր նրանց վրա
իրեւ իրերի, վորոնք իր անձեռնմխե-
լի ու անկապտելի սեփականությունն
էյին, իրեւ էյակների, վորոնք պար-
տավոր էյին հասկանալ իր մեն մի
շարժումի խմաստը, վորոնք ինչպես
ծառի տերեւները շարժվում են քա-
մու հոսանքի ուղղությամբ, այնպես
էլ այդ արարածները պարտավոր էյին
շարժվել իր ցանկացած ուղղու-
թյամբ...

Յեւ խոնարհած գլուխներով, սա-
կայն աչքերի զղաստ թարթումով աւ-

Թը կանայք լուռ հետևում եյին
Սարգսարի մոլեղնած անց ու դար-
ձին... Ութը կանայք... Սարգսարը
քայլում ու հաշվում եր մեկ...յեր-
կու... մինչև ութը... ութը կին,
ութը հրաշք. մեկի աչքերը վառման
խարույկ եյին, վոր կարող եյին լույս
առլ դիչերվա խալարում, մեկինը
կապույտ, ինչպես Իրանի հնամենի
ծովն եր, մեկը ճարպիկ եր ինչպես
վիթ, մյուսը ճկուն ու թեթեւ վար-
պես յեթեր, մեկի սարանոցը խոյանք
ուներ կարապի նման, մյուսինը լու-
սածին մարմար եր, վորի մեջ կար-
տացուեր աշխարհն իր բյուր հրաշ-
քով, մեկի բերանը նորարողութ՝ վար-
դենի եր, մյուսինն արդեն բացված
մանուշակ. և լուրրի վրայից բուրում
կ, ջննաթի անմահական հոտը:

Սարգսարը նայում եր կանանց և
ինչքան շատ եր նայում, այնքան ա-
հադնաճում եր նրա կատաղությունը.
ինչքան հրապուրիչ, դուրեկան եյին
այդ ութը կանայք, այնքան անբռնա-

դատելի ու մուկդին եր դառնում նրա
կատաղությանը :

— Ո՞ր ե Լաթիֆեն, ինչպե՞ս փա-
խալ, ո՞վ ողնեց նրան, հա՞, դու
չգիտե՞ս, դո՞ւ ել, դո՞ւ ել, դո՞ւ
ել... ա՛հ, հասկանում եմ... դուք
բոլորդ վախ առնեք իմ դեմ... դուք
ամեն մեկդ ձեր սրտում մի մի սիրե-
կանի պատկեր եք պահում... վայ թե
մի ճեղքվածք եք տեսել դռան արան-
քում... խկույն, կառավի պես ճկուն
կդառնա ձեր մարմինը, ու հայ-
դե՛ք...

Սասում եր Սարգսրը մուկդնած,
մերթ կանառից մեկին, մերթ մյու-
սին դիմելով, ապա կատաղաբեն նու-
րից հետ ու տառջ շարժվում դա-
շնում :

Յերմու որ առաջ հարեմից փախել
եր նրա իններոգ կինը, Լաթիֆեն.
նա ամենից մատաղահասն ու ամենից
սքանչելին եր. չորս ամիս տասնրվեց
ամյա աղջիկը դիմադրել եր Սարգս-
րի քմահաճ, կրքոտ պահանջներին ու

վերջը փախել էր... Թե ինչ ուղղա-
թյամբ՝ Սարգսրը չէր կարողացել
այարկել։ Նա անմիջապես գլխատել
էր ավել կանանոցի պահապան յերեք
ներքիններին, հետո զանազան ուղ-
ղությամբ ուղարկել էր հետախույզ-
ներ, բայց բոլորն էլ ձեռնաւնայն ելին
վերադարձել։

Ահա այս դեպքն էր, վոր մոլեղ-
նության աստիճան կատաղեցրել էր
Սարգսրին և այդ էր պատճառը, վոր
նա կատաղել էր նաև իր մնացած ու-
թիւ կանանց դեմ... Այժմ նա չէր
համարում նրանցից և վաղ մեկի
սիրուն. նրանց բոլորի դուրդուրան-
քը կեղծ, բռնադրասիկ, շողոքորթ և
առերես ելին թվում Սարգսրին և այդ
մտքից նա ավելի ու ավելի յեր դա-
դադում...

Արեւիկայան հալեմում սեր չկա...
Սեր չի կարող լինել այնտեղ, ուր
տիրապետում և անսանձ բռնաւթյունն
ու անասնակամն վիրջը... Սերը,
բնության այդ սքանչելի պարզեւր

աճում ու ծաղկում եր հյուղերում ,
ժողովրդի ծոցում , վորը սակայն
թռչնում ու խամբում եր բռնավարի
հարվածի տակ... Այժմ Սարգսարը
կուզեր մեկին , վոր ամբողջովին
նվիրվեր իրեն , նվիրվեր վոչ թե
վախին ու բռնությանը դիմելով , այլ
սրտանց , ամբողջ հոգով . նա մեկ-
մեկ նայեց իր ութը կանանց և չդը-
տավ նրանց մեջ վոչ մեկին , վոր
կարողանար անկեղծ լինել իր հետ...

Յեւ Սարգսարը մի վերջին անգամ
դնաց յեկավ դահլիճում , ապա ծա-
լատաբախի նստեց թախտին և թաղ-
բեհը ձեռքից ձեռք դցելով խոսեց .

— Սիմիդա՛ր , մոռեցիր ինձ :

Կանանց խմբից առաջացավ սեւա-
հեր , ածուխից ել վառվռուն աչքե-
րով մի թեթևաքայլ կին . մետաքսի
նուրբ հյուսվածքի դեկատը հաղխվ
ծածկում եր նրա կուրծքը՝ բաց թող-
նելով ամբողջ նրա ճյուղնափայլ վո-
րովայնը , վորը Սողոմոն խմատունն
ըմպելիքով լեցուն բոլորակ թասի ու

չուշանով պատած ցորենի շեղջին պի-
տի նմանեցներ՝ համեմատելով հի-
նավուրց— Յերուսաղեմի աղջիկների
հետ :

Սիմիդարը հասնելով Սարգարին
ծուռիկ իջավ ու խոնարհ գլուխ
տալով համբուրեց տիրոջ քղանցքը :

Սարգարը ձեռքը տարավ, շոյեց
Սիմիդարի դուռնչը, նայեց նրա վառ-
վառ աչքերին և դողաց ամբողջ
մարմնով :

— Դու ո՞ւմն ես սիրում, — հարց-
րեց Սարգարը :

— Վերել պատված, ներքեվը իմ
տերը, իմ խանը, վորի ստրուկն ու
կամակատարն եմ յես, վորի փեշը
համարձակվում եմ համբուրել, — ա-
սաց Սիմիդարը ու նորից համբուրեց
Սարգարի դեկտի քղանցքը :

Սարգարը մի պահ շոյեց մորու-
քը, դուռնը տարուբերեց, ապա հեր-
թով կանչեց մյուս կանանց, բոլո-
րին տվեց միևնույն հարցը և ըս-
տացավ միևնույն պատասխանը :

— Վո՛ճ, վո՛ճ, — բացականչեց Սարգսարը, — նա ել, Լաթիֆեն ել, այդպես, ճիշտ այդպես եր յերդ-վում, բայց փախա՛վ, փախա՛վ... դաք բռնորդ սերտած բառեր եք կրկնում... Հե՛՛յ, ներքինի Սահիբ, Հե՛՛յ Սահիբ...

Ներքինին փութկատ, կատվային շարժումներով յեկա՛վ կանգնեց կանոնց դիտարկելովում :

— Սահիբ, — խոսեց խանը, — կրտանես, այս ութին ել կանգա՛վորես ի՛մ ապարանքի յետևի՛ր սենյակում. տնօրէնացեալ լուսամուտներին տմենա-տմուր շաղախով քարեր շարել կտաս, այնպես վար արե՛վի վո՛չ մի ճառա-դայթ չընկնի այդ սենյակում. վեց ամիս նրանք պիտի մնան այնտեղ, ու վեց ամիս արե՛վը չպիտի ծաղի նրանց համար...

— Քո խոսքը սրենք ե, տեր, — այս սորվանից մինչեւ վեց ամիս այլեւս արե՛վը չի ծաղեւո՛ւ ութը խանութնե-րի համար :

— Իսկ դուք ի՞նչ կատեք, խանութ-
նէ՛ր, — հարցրեց Սարգսրը:

— Քո խոսքը որենք ե, տեր, — ա-
ռաջինը խոսեց Սիմիղարը, — այսօր-
վանից այլևս արեւը չի ծագում:

Յեւ վնույնը կրկնեցին Սիմիղարի
յետեւից մյուս յսիւր կանայք:

Ու յերբ Սարգսրը դռն իր վճռից
նորից թաղրահը ձեռք առնելով վոտ-
քի յելսով ու սկսեց անց ու դարձ
անել սենյակում՝ ներքինի Սահիրը
ուիւթը կանաւեց առջեւին առած տարաւ
զեպի մատնանչված սենյակը՝ Սար-
գարի վճիռն իրազործելու...



II

Սուրդարը դուրս յելալ իր ապարան
 քից և իջալ այն հովիտը, ուր հնա-
 մենի Զանգուն դարաւոր կատաղու-
 թյամբ դալիս իր կոհակները փշրում
 եր ժեռ սալառաթի ու վհատ մրմուն-
 ջով քշւում եր առաջ... Յերեկվա
 տապին հաջորդել եր յերեկոյան դո-
 վացուցիչ հովը. Արարաաի ձյու-
 նափայլ դադաթից յեկող մեղմ
 քամին միացած Զանգունից արձակված
 թարմացուցիչ չնչին, Զանգունի հովի-
 տը լցրել եր հաճելի բուրմունքով:
 Յեւ յայդ բուրմունքը մանավանդ հա-
 ճելի յեր, վարովհետեւ Զանգունի յեր-
 կու ափերին փռված այգիներում հա-

սունացող տանձն ու դեղձը, ապա ցլ-
րեկվա արեւով ոծված խաղողի գու-
նադեղ վողկույզներն, այժմ ավելի
հաճելի ու դուրեկան տեսք ելին ստա-
ցել:

Սարդարն իջավ այգիների արահե-
տը, շնչեց թարմ ուղը, զգաց հովիտի
բուրմունքը, բայց չչիջեց նրա վատա-
ղությունը... Նա անսահման նվաս-
տացած եր գգում իրեն Լաթիֆեյի
վարմունքից... Արեւելյան բռնակա-
լի վոխակալությամբ նա կոխում,
արորում եր վոտքի տակ ընկած յերի-
ներանդ ծաղիկները, ծաղիկներ, վո-
րոնց վրա ամեն ոք կաթում եր
բունադատված յերկրի աշխատավորի
արյունն ու քրտինքը՝ իրա Սարդարի
վոտքի համար, բայց և այնպես նա
չեր հանդարտվում... Նա կուղեր
ճիշտ և ճիշտ այդ ծաղիկների նման
իր վոտքերի տակ ճղմել անհնազանդ
Լաթիֆեյին, ճիշտ այնպես, ինչպես
ինքը տարիներ շարունակ իր կրունկի
տակ ճղմել եր ամեն մի ըմբոստ

հայացք, ամեն մի խոսք, վերի մեջ
անհաճո շեշտ կար իրեն համար:

Այս մտորումներով նա մի քանի
անգամ գնաց ու յեկավ հովիտի յեր-
կարությամբ, շոշափեց հնամենի հառ-
տաքեստ ծառերի բունը և ինքն ել
չգիտեր թե ինչով պիտի վերջանար
որը... Վերադառնալ տո՞ւն, բայց
տունը նրա աչքին սեւ ոճ եր դար-
ձել, Լաթիֆեն պղծել եր նրա շեմքը.
հարկավոր եր մի այնպիսի արտա-
կարգ բան, մոր մեղմեր նրա կատա-
ղությունը, մոր հանդատացներ նրա
բարբոքված արյունը և նա մերթ լա-
ղուր յերկնքին եր նայում, մերթ
տխրացող ծառերին, և ամենից շատ
աղմկող Զանգույին... Զանգո՞ւ,
ի՞նչ կար նրա ծաղրերում, ինչո՞ւ յեր
նա այդպես մոլեկոնած սուաջ ընթա-
նում... և յերբ նա խորհրդածելով
Զանգուի մասին կրկին հայացքը հա-
ռեց դեպի գետի հոսանքը, աւր
միրմիրադեպ մի ալիք սանձից արձակ-
ված սմեհի ցուլի նման սուաջ եր ըն-

Թանու՛մ՝ նա մի պահ վանդենց . ալի-
քը փշրվեց զարնվելով ասիից դեպի
դեպի խորքը ձգված ժայռի մի մեծ
բեկորի վրա և հենց այդ ժայռի
ցցունքին յերեւաց մի աղջիկ : Թվաց
թե դջիկը ծնվեց փրփուրից, թվաց
թե ալիքը դուրս նետելով աղջկան
հանդարտվեց և չիջավ նրա քիչ ա-
ռաջվա մուկեղնությունը : Սարգսրը
յերեք քայլ առաջ անցավ և կանգնեց .
այո՛ աղջիկ եր... աղջիկ, բայց այդ
ինչ յերկնային լույս եր, վոր պա-
րուրել եր աղջկա դեմքը, այդ ինչ
լուսածին ճերմակություն, այդ ինչ
հուր հրաշք աչքեր . այդ ինչ նազանի
չարժուճեւ . աղջկա ձեռքին յեղած
փոքրիկ կուժն ել թվում եր թե ա-
ռանձին փայլ ու հրապույր եր ստա-
ցել . թրծած կավը արեւի վերջին շո-
ղերի տակ պսպղում եր ինչպես աղա-
մանդ, բայց դուցե դա աղջկա փայլն
եր, վոր անցել եր կուժին ու չըջա-
պատին և ամեն ինչ դարձրել չքնաղ
ու հրապուրիչ... փերի, ջրից ծըն-
ված փերի, ահա, այս միտքն եր ան-

ցամ սնտախապաշա Սարգարի դիտով-
 դուցե դա մարգարեյի պարզեմն եր-
 իրեն, իր կորցրած Լաթիֆեյի փոխա-
 բեն. և ի՞նչ Լաթիֆեյ կը հասներ
 սրան... ահա՛, ահա՛, հիմա ամեն
 ինչ վերախօյի, հիմա փերին նորից
 ջուրը կընկնի, բայց այս անգամ ար-
 դեն յերեմի Եկիայի հազուստով ու
 խայտալով ալիքների հետ առաջ կը-
 սուրա՝ տիրն թողնելով կայծակնա-
 հար ու շփոթված Սարգարին... Բայց
 վո՛չ, աղջիկը փութով կուժը դեպի
 դեմն և յերկարում, ձեռքը դողում և,
 կուժը խաղում և ալիքների հետ ու չի
 սուզվում ջրի մեջ... Իսկ աղջիկն այն-
 պե՛ս շտապում և... փերջապես նա կու-
 ժը դուրս և քաշում ալիքների միջից,
 դնում և ուսին ու վախժարած լիթի
 նման համարյա թռչկոտելով անցնում
 և այգիների միջով... Ծարժվում և
 աղջիկն առաջ և քիչ հեռու տեսնե-
 լով այգիներում աշխատող յերկու այլ
 աղամարդու, կարծես հանդարտվում
 և և այս անգամ քայլում և համա-
 չամբ։

Յերկու տղամարդիկ, վոր տեսել են
աղջկան, ապա նաև նրա յետեւից
գնացող Սարգսրին լցվում են կատա-
ղությամբ, բայց վռչինչ անել չեն
վարող... նրանք գիտեն, վոր Սար-
գսրն այդ բոլեյին դադաղած դայլի
հոգեւիճակ և ասրում և վտանգավոր
և նրան մոտենալ, կամ նույնիսկ վո-
րեւե ակնարկով հասկացնել, թե իրենք
վորեւե հակակրանք ունեն Սարգսրի
հանդեպ:

Նկատե՞ց արդյոք Սարգսրը յերկու
տղամարդկանց, թվում և թե այո...
Բայց ինչ հոգ թե ավքեր են նրանք,
չե՞ վոր ինքն և այս քաղաքի ու շրջա-
պատի ամենահալ տերը, Ե՞վ և այն
համարձակը, վոր պետք ե իր առաջը
կանգնի. բայց աղջիկը նորից շտա-
պում ե, անհնար ե նրան հասնել...

— Սահի՞ր, — դառնում ե Սարգսրը
հեռից իրեն մոտեցող ներքինուն,
— Սահիր, հետեւիր այս աղջկան, ի-
մացիր նրա քնակավայրը և խնձ շու-
տով յուր բեր...

III

Մթնեց : Սարդարն սպրում ե մըթ-
նըշաղի տեսիլքի հրապույրով... քո-
պե առաջ պետք ե կրկին տեսնել
նրան. վո՛չ, վո՛չ միայն տեսնել, այլ
ունենալ իր մոտ, իր սեփական հար-
կի տակ, ճողոպրած լաթիֆեյի փո-
խարեն... լաթիֆե՛... բայց գեղեցիկ
ու. քաղցրահնչյուն ե այդ. անունը
նույնքան, ինչքան քաղցր. ու գեղե-
ցիկ ե ինքը այդ աղջիկը... Նա այդ-
պես ել կկոչի այս նոր աղջկան...

Սահիրը վերադարձել ե իր հետա-
խուղությունից. Սահիրն ամեն բան
դիտե... այո՛, հենց այս աղջկա ա-
նունն ել լաթիֆեյի, վո՛ր կա... այ-

դուժ յիդած յերկու տղամարդկան-
ցից մեկը՝ Իբրահիմը՝ աղջկա յիդ-
բայրն և, իսկ մյուսը՝ Մանսուրը քա-
ջակորով յերիտասարդը՝ աղջկա սի-
րահարը, հենց այս շաբաթ նա պիտի
ամուսնանա Լաթիֆեյի հետ:

— Ամուսնանա՞, — բացականչում
և Սարգարը և կրճտացնելով ատամ-
ները հաղնում և յերևանցի վաճառա-
կանի դղեստ և Սահիբի հետ դուրս և
դնում սանից... Նրանք անցնում են
Քերեվանի ոճապտույտ փողոցներով,
հասիե ցածրաչեն տների միջով,՝ վո-
րոնց նեղլիկ լուսամուտներից հաղիվ
առկայծում և թույլ ու նալաղ լույ-
սը... Գնում և Սարգարը, հղոր խա-
նը փողոցներով, դնում և ամենացոզ
հուղումով, դնում և լայն, լայն բա-
ցած աչքերով, վորոնք կխաթաթար
փողոցներում փաթում են, ինչպես
զայլի աչքերը խաթար անտառի խոր-
քից:

— Ահա՛, — ասում և Սաֆիյը, ահա
այս լուսամուտի յետևվում և դորն-
վում Լաթիֆեն:

Սարգսարը կանգնեց և ասեց... փո-
ղոցում աշխատեցի ու դարձող չկա...
բայց այս ինչ անմահական ձայն և
այս ինչ քննաթափան մեղեդի... Սա-
հարը վստայունով ասաց և անցնում
և քիչ հետո նույն վստայունով հետ
դառնալով...

— Նա յե, տեր իմ, նա յե թառի
վրա նստում ու յերգում...

Լաթիֆեյի ձայնը... հետզհետե խո-
րացող խափարի մեջ ալիքաձևովում
և ու տարածվում Լաթիֆեյի ձայնը,
տարածվում նրբին դաշլաշլուկով,
տարածվում քնքուշ, շոյող ու հմայիչ
յեղեղեղներով, թվում և թե ամբողջ
շրջապատը լուր և՛ ունենդրելու Լա-
թիֆեյի այնքան քաղցրահնչյուն մե-
ղեդուն... Յե՛վ Սարգսարի հողին լըց-
վում և տիրողի քմահաճ ու բռնակալի
անհատում քինախնդությամբ դե-
պի այն ամենը, ինչ սլափար և իր
ու Լաթիֆեյի միջև. քանդել, վռնել-
հանել այդ ամբողջ պատվարը...
Մեկ Լաթիֆեն փախավ, այժմ կա
մյուսը... վռնահանել այն բոլոր կա-

պերը, վոր այս նոր Լաթիֆեյին
կապում և դրաի հետ, աշխարհի
հետ... Միայն ու միայն իր համար
պիտի յերդի ու նախդի Լաթիֆեն,
միայն ու միայն ինքը պիտի ունկընդ-
րի նրան, և վաչ վառ, վաչ վառ չպի-
տի համարձակիլի լսել նրան... Պետք
և խցել բոլոր աղանջները, պետք և
փակել բոլոր սրտերի դռները, վո-
րոնք բարախում են Լաթիֆեյի հա-
մար...

Լուսն նախդը... Թվաց թե ամեն
ինչ մոայլիկն շրջապատում. այժմ
իրոք վոր խափար և, այժմ ամեն ինչ
ճնշող և ու անհրապույր:

Սարգսը շտապում և իր ապարան-
քը... մի քանի բոպեյում ապարանքի
ծառաները, ապա նաև Փարրաշները
դենք ու դրահը կապած, պատրաստ
սպասում են Սարգսի հրամանին...
Թվում և թե խանը պատրաստվում և
պատերազմի, թվում և թե ինչ վոր
թշնամի յե ներխուժել յերկրի սահ-
մանները: Սարգսը կանչում և Փար-

բաշներէ զեկալարին ու ինչ վոր հրամաններ ե տալիս...

— Ամեն ինչ կլինի մեր տիրոջ հրամանի ու ցանկութեան համաձայն, — ասում ե Փարրաշներէ զեկալարը ու ղինված խումբը շարժվում ե առաջ:

Տիրոջ՝ Սարդարի հրամանն եւ Լաթիֆին վողջ ու առողջ իր թառով հանդերձ բերել իր սալարանքը, իբրեւ իրեն կին... Յեւ մեկ ժամից հետո արդեն ամեն ինչ կստարված եր Սարդարի հրամանի ու ցանկութեան համաձայն:

Լաթիֆեն ինքն իր թառով, գլխահակ, արցունքոտ աչքերով կանգնած եր Սարդարի առջեւ...



IV

Մարդարը նայում էր Լաթիֆեյին
 և բոլի առ բոլի աղջիկը նոր ու նոր
 հրապույր էր ստանում նրա աչքում.
 այժմ Լաթիֆեն շիկնել էր ու Շի-
 րազի չքնադահյուս վարդերի բույր
 ստացել. աչքերից իջած արցունքի
 կաթիլները վաղորդյան ցողի պես
 շիթ առ շիթ իջնում էին նրա այտերն
 ի վայր և ավելի դրավիչ դարձնում
 նրան... Մարդարը մի քանի քայլ ա-
 րավ դեպի մատաղահաս աղջիկն ու
 կանգ առավ. նա վախենում էր, չլի-
 նի թե հանկարծ չքանա այդ տեսիլ-
 քը, քանի վոր տեսիլքը կարող էր
 միայն այդքան հրապուրիչ, այդքան

սքանչելի լինել... Թալում եր թե աղ-
ջիկը աննյութ, անմարմին մի էյակ
ե, վեր ջննաթից իջել ե միայն ու
միայն մի բոպե վառելու Սարգարի
սրտում մարդարեյի խառնացած հան-
դերձյալ հյանքի կարոտը ե չքանա-
լու... բայց ե սյնպես, հետզհետե,
ցանկությունը, աղջկան մոտիկից ըզ-
գարու ցանկությունը ահադնանում
եր բոցսոխալող հրդեհի նման ե
Սարգարը մի վճռական քայլով գըր-
կեց աղջկա ճկուն իրանը...

— Յերգիր, Լաթիֆե, յերգիր ինձ
համար, յերգիր ու նվազիւ քո այն
անմահական յեղանակը:

Լաթիֆեն կատաղորեն շարաում ե
ձեռքից թառը ե աշխատում ե աղաո-
վել Սարգարի գրվանքից:

— Մի համառիր, Լաթիֆե, այս ամ-
բողջ ապարանքը քոնը կլինի, դրոի
հետ դու այլևս գործ չունիս. այն-
տեղ վաչ վաք չկա:

— Այնտեղ կա Մանսուրը, կա Իբ-
րահիմը, կա Զանդուն... Յես տի-

բում եմ ջուրն ու արեվը, յես հենց
հիմա պիտի գնամ, յես պետք և ա-
ռաջութը շուտ դարձնեմ, վոր ջուր բե-
րեմ Զանդուից:

— Քեզ համար ջուր կրերեն իմ
ծառաները. իսկ Մանսուրի և Իբրա-
հիմի մասին մոռացիր. նրանք կեղ-
տոտ ու վսշտոտ մշակներ են, վորոնք
պետք և գիշեր ու ցերեկ աշխատեն,
իսկ դու պիտի տպրես ու զվարճա-
նաս. իսկ Զանդուն, չա՛տ ես սիրում
Զանդուն...

— Շա՛տ, չա՛տ, և Զանդուն, և՛
Մանսուրին, և՛ Իբրահիմին:

— Յես քեզ ասի, վոր մոռացիր Ման-
սուրի ու Իբրահիմի մասին, իսկ Զան-
դո՞ւն... Զանդուն, առաջութը կը-
հրամայեմ, վոր Զանդուն շերին իմ
ապարանքը...

— Զանդո՞ւն... քո ապարա՞նքը...

— Ի՞նչ կա դարձանալու... յես եմ
սուրն ու իշխանը և իմ խոսքը որե՛նք
և... Զանդուն չատ ջուր ունի... ա-
սու հանել կտամ... այստեղ ապա-

բանքի ընդարձակ բաղոււմ, մարդկանց աչքերից հեռու մի մեծ ավազան կը սարքեմ, չորս բալոյրը ծաղիկներ կանկեմ, ծաղիկներ, դրախտային ծաղիկներ և դու ինչպէս փերի կըողանաս ավազանի մեջ, կհոտոտես ծաղիկների բույրը, ապա կնախդես ու կերդես՝ իսկ յես կգիտեմ թե դու ինչպէս քո աստվածային մարմնով կխաղաս ալիքների հետ, կգիտեմ քո ունդերը, վարոնք վարդերից ու շուշաններից անուշ հոտը ներս կծծեն, իսկ յես կծծեմ քո ունդերի ու շրթունքների հոտը, դու կնախդես ու կերդես, իսկ յես կըսեմ ու կսքանչանամ քո ձայնով, քո մտտների կախարդիչ խաղով...

— Բայց այնուամենայնիւ յես սիրում եմ Մանսուրին ու Իբրահիմին:

— Դու այլևս չես տեսնի Մանսուրին ու Իբրահիմին... նրանք կաշխատեն քո յերջանկության համար... նրանք լուսածաղից կաշխատեն Զանգուի աղունքում և իմ մյուս բազմա-

Թիվ ծառաների ու ֆահլանների հետ
ջուրը կհասցնեն ավազանին, վոր դու
ջրի սկս սլաճառ ու ուրախ լինես,
վոր դու հասկանաս թե ինչ հրաշ-
ներ կարող ե անել ամենակարող Սար-
դարը, վոր դու հնազանդ լինես քո
տիրոջ հրամանին...

Լաթիֆեն դուռիսը հետ գցեց, չը-
նաղ մաղերը թափով հետ ընկան,
դուրվեցին նրա ուսերի վրա և նա
զգաց, վոր անդոր ե դիմադրել բռ-
նակալի կամքին, բայց իր սեվա-
թույլ աչքերում, դրսի, ազատ կյան-
քի կայծը դեռ փայլելում եր... Նա
լսել եր իրենից առաջ յեկած Լաթի-
ֆեյի սլամությունը և իրեն որո-
րում եր այն չքնաղ յերազով, վոր
մեկ որ ինքն ել ազատ կլինի, ինքն
ել իր Մանսուրի դրկում կհանդատա-
նի իր տրտիող սիրտը...

Մարդարը կարծես հասկացավ աղ-
ջկա քրտմնջոցի իմաստը... վո՛չ,—
վճռեց նա,— վո՛չ մի ճանապարհ չի
լինի գեպի դուրս... Մանսուրին բւ

ԻբրաՀիմին այն ձևով պիտի աշխատեցնել ջրանցքի վրա, վեր մինչև ջուրը տեղը հասնի նրանք այլևս գադարեն ապրելուց... Իսկ տվադանը, ավադանը, ո՛հ, այդ նրա յերազն եր... այդ միտքը ծագել էր նրա գլխում հենց այն պահին, յերբ վեր-փրագեղ ալիքը ջարդվեց ժայռի վրա և յերևաց Լաթիֆեն... Ինքը յենթադրում էր թե ահա՛ ուր վոր և աղջիկըն իբրեւ տեսիլ ջուրը կընկնի ու կանհայտանա, բայց այդ տեղի չառնեցալ, այժմ Լաթիֆեն կլողանա իր աչքի տոջե, իր համար, միայն իր համար... Կա՞ր ավելի հրապուրիչ պատկեր, քան չքնադադեղ Լաթիֆեն, ջեննաթի այդ փերուռ տեսնել տլիքների հետ խաղալիս... Ձե՞ր վոր այդպես և դրված հեքիաթներում և ո՛վ և խանդարում Սարդարին այդ չքնաղ հեքիաթը իրականություն դարձնել և թող աշխարհն իմանա, թե ինչ կարող և անել Սարդարը, յերբ նա ուզում է նվաճել զգայական հաճույքի ամենարարժր դադաթը...

V

Յեւ Սարգսի հրամանով Փարաշ-
ները աղիներից, տներից, գյուղե-
թյունը... Հալաքեցին մտրակի հար-
ձուր ու հարյուր մարդիկ. հալաքե-
ցին խանության բոլոր աղբի հալա-
տակներից. հալաքեցին պարսիկներ,
հայեր, թուրքեր, քուրդեր, ասորի-
ներ... Կանգ առաւ կյանքն ամեն
տեղ. ամեն ընտանիքում բարձ-
րացաւ վոզը ու կոծ... Ամենքը
մոգրացին իրենց դառնատանջ կյան-
քին հասած այս նոր դժբախտու-
թյունը... Հալաքեցին մտրակի հար-
վածներով, հալաքեցին այնպես,
ինչպես հնադարյան ակերը հալաքում

ե իր ստրուկներին... Վա՛հ մի ա-
ղերսանք չլսեց ու չանսաց Սարգսրը
և ամենից առաջ բերին Լաթիֆեյի
յեղրորը՝ Իբրահիմին, նորափեսու-
թյան պատրաստվող Մանսուրին ու
նրանց յերկար տարիների հարեան
կարապետին...

Առաջին դիշերը Մանսուրն ու Իբ-
րահիմը փորձեցին արել դիմադը-
րել ֆարրաշներին, թույլ չտալով
վոր նրանք Լաթիֆեյին տանեն.
Բայց քսան դինված ֆարրաշների դի-
մաց վռչինչ չեցին կարող անել նը-
րանք և մահվան սպառնալիքի տակ
հարկադրված եյին տեղի տալ բռն-
նամկալի քմահաճույքին։ Հետևյալ
որը նրանք խորհրդակցել եյին իրենց
սրտակից կարապետի հետ և յեկել
այն յեղրակացության, վոր պետք եր
համբերել, համբերել, ու համբերու-
թյամբ նախապատրաստել Լաթիֆե-
յի փախուստը...

Բայց մի՞թե սիրաղ սիրտը գիտե
համբերել։ Մանսուրը, այդ ջլապինդ

ու քաջառողջ տղամարդի սրտում
 ժամ առ ժամ ցատումը լեռնանում
 էր Մասիսի նման ու զայրույթն ընդ-
 դեմ խանի բորբոքվում էր Իրանի ա-
 վադուտներից յեկեղ մրրկի նման...
 Այդ բանը շատ լավ դիտեր Սար-
 դարը, այդ բանը դիտելին Փարրաշնե-
 րը, այդ պատճառով Մանսուրին իր
 յերկու ընկերներով աշխատանքի ելին
 դրել ջրանցքի ամենադժվարին մա-
 սում, նրանց վրա հակիչներ ելին
 կարգել ամենադաժան Փարրաշների,
 վորոնց խոսքը հայհոյանքն էր ու
 փաղաքշանքը արջառի ջղերից հյու-
 սած մտրակի հարվածը...

Այն դիչեր աւ ցերեկ առանց հան-
 դատի աշխատում ելին հարյուր ու
 հարյուր Փահլաները, փորում, բա-
 ցում ելին մայր հողի կուրծքը և
 ամեն մի բացվածք թրջում ելին
 դառն քրտինքով ու արյունով...
 Բարկ արևի տակ մի փարչ ջրով ու
 չեքացած հացի կտորներով աշխա-
 տում ելին Փահլաները, առանց իմա-

նալու, թե ինչը և ինչո՞ւ համար են
փոքրում: Գուցե դա մի ընդարձակ
յերկարալուծ դերեղման եր, ուր հե-
տոք բոլորը սխալի թաղվեյին. վաչ
վաք վաչինչ չդիտեր. նրանց հրամայ-
ված եր այսինչ խորաւթյան ու այս-
ինչ լայնության փոքել և նրանք փո-
րում եյին... Հողի շերտերին հաջոր-
դում եյին քարե ամուր դանդաժ-
ներ և ֆահլաները լարելով իրենց
մկանները փշրում եյին քարերը,
քրտնում, քրթմնջում և դարձյալ ու
դարձյալ փոքում:

Հենց առաջին շարաթը մի սառ-
նյակ ֆահլաներ դառն իրենց դերեղ-
մանը ջրանցքի ափերին Մարդարը հը
րամայեց մեռածների հենց ջրանցքի
ափերին ել թաղել. նա ինչ վոր
հեքիաթում լսել եր, վոր կառուց-
վածքն ամուր ե լինում, յերբ մարդ-
կային դիտկներով են ամբացնում
այդ կառուցվածքի հիմքը և նա կա-
ղեր վոր հնամենի հեքիաթը իրական-
ություն դառնար...

Արարատյան այրող արեւի ներքո
 վառում եյին այդ մարդկային արա-
 բածները, ինչպես չնչին միջատ-
 ները, սակայն այն տարբերութեամբ,
 վոր միջատները բնազդով աշխատում
 եյին իբեւց համար՝ վայելելով իրենց
 աշխատանքի պտուղը, իսկ մարդկա-
 յին այդ հոծ դանդաժը դատապարտ-
 ված եր քրտնելու ու հողնելու, տանջ
 վելու ու տոկալու քմահաճ բռնակալի
 համար... Բռնակալ, վոր նրանց
 մեջ խեղդել եր ամեն զգացմունք,
 ինչ վոր մարդկային եր, բռնադատել
 ամեն արտահայտութեան, ինչ վոր
 նրանց կարող եր բռնական արարա-
 ծի տեսք տալ:

Յեւ վաճառականքի յերրորդ ամ-
 քում քաջակորովն Մանսուրը, նրա
 հետ նաեւ Իրրահիմն ու Կարապետը
 վոխիւնցին, դարձան կմախքի մի
 դանդաժ, վորոնք ուրվականի պես
 ինչ վոր չարժումներ եյին անում,
 բայց այլևս ուժ չեր մնացել նրանց
 մկաններում և վռչ ել նախկին կայ-

տառ արյուները նրանց յերակներում :
Յերբ Մանսուրը նայեց իր չըջապա-
սը, տեսալ, վոր յերեք ամիս առաջ
յեղած ֆահլաններից վաջ վոք չեր մը-
նացել . տաժանակիր, քաղցած աշխա-
տանքը բոլորին վոջնչացրել եր, նը-
րանց հաջորդել էյին նաբերը, վա-
րոնց սպասում եր միևնույն ճակա-
տադիրը :

Այդ ժամանակն եր ահա, վոր Սար-
դարը, վոր վճռել եր Լաթիֆէյին
կտրել դրսի աշխարհից, վորպեսզի
այլևս վաջ մի սիրտ չբարախի նրա
համար, հարցրեց Փարրաշին :

— Թագեցի՞ք Մանսուրին :

— Վո՛չ, տեր իմ . նա դեռ դիմա-
նում ե :

— Ա՛հ, հասկանում եմ, թե ինչու
դործը դանդաղ ե ընթանում . դուք
թույլ եք տալիս, վոր մարդիկ աղա-
յաւթյուն անեն, հա՞, հայդե՛, դնա
և սմբարցրու ջրանցքի ափերը նրա
դիակով ու այն ժամանակ դործն ա-
րագ կընթանա . . .

Իւ յեկա՛յ ֆարրաշը Մանսնէրի
 մաս այն ժամանակ, յերբ նա կարո-
 տակեղ սրտով քլունդը վայր եր դը-
 րել ու աչքերն հառել դեպի Սար-
 դարի ասպարանքի կողմը, ուր թաղ-
 ված եր նրա սիրտը, ուր թաղրտում
 եր նրա սիրելի ու վանդակված սիրտը
 և նա կարծես զգում եր այդ թը-
 պրտոցը և դրանից եր, վոր իր սիրտն
 ևլ թաղրտում եր... Հեռու, Արարա-
 տի կատարից դալիս, կարծես վերեւից
 առաքված. դալիս եր մի թուխ ամոլ
 և այդ ամսը թամրած ձիու տեսք
 ունեւ և թվում եր Մանսուրին, թե
 տհա՛, տհա՛ այդ ամսն ավելի ներ-
 քե՛ւ կիջնի, ինքը կթռնի այդ ամպի
 վրա, կհասնի Սարդարի ասպարան-
 քին, կիջնի, կվերցնի Լաթիֆէյին՝
 յերկուսով միասին նորից կթռնեն ամ-
 պին ու կսավառնեն հեռու, դեպի ա-
 դատություն, ուր խան ու սարդար
 չկա, ուր կարելի չե աշխատել, ասը-
 րել ու սիրել... Հրա՛չք, բայց միթե
 հրաշքը խեղճերի համար ե... Բեւ

ահա այդ պահին տեղի ունեցավ ու-
րիշ հրաշք, Փարրաշը թափով յե-
կավ մերկացրած սուրբի հակառակ,
բռնեց կողմով հարվածեց Մանսուրի
մեջքին ու դռաց...

— Խանություն ես անում հա՞,
կեղտոտ Փահլա:

Մանսուրը վեր թռավ տեղից, չը-
նայած մեջքի սուր ցավին, թվաց թե
ուժ առավ, վերցրեց մի քար ու թա-
փով հարվածեց Փարրաշի գլխին.
Փարրաշն ընկավ ձիուց ու թամբած
ձին խրխնջալով կանգնեց իրա՝ Ման-
սուրի առաջ... Ահա՛ քեզ հրաշք:
Ձե՛, իդուր չեր Մանսուրի յերաղը.
Մանսուրը փորձ փորձեց թռչել ձիու
մեջքին, սուրալ դեպի ապարանքը,
փախցնել Լաթիֆեյին ու գնալ դեպի
սղատություն... Բայց հրաշքը մը-
նաց կիսատ... Փարրաշների մի
այլ խումբ վրա հասավ— մի բռակ-
յից Մանսուրին իրբև դիակ փռեց
դետնին և նրա կարոտով բաց մնա-
ցած աչքերի առջևից Արարատից յե-

կող թուխ ամպը հանդարտ անցալ,
բայց այս անդամ թամբած ձիու կեր-
պարանք չուներ, այլ մի անպարփակ
վիհ եր, ուր կարող եյին տեղավորվել
բոլոր ֆահլաների դիակները...

Իբրահիմն ու Կարապետը լալով
վոս փորեցին ու Մանսուրին իջեցրին
դերեղման և Կարապետն անխելի,
ինքն իր համար մըմնջաց.

— Ա՛յ Մանսուր, խաղաղություն
հողուդ, հանդուցյալ մարմին, ա՛յ
ի՛նչ պատկերակից հաղածին, Հավատ-
ներս մեկ չեր, սրաներս հո մեկ եր,
մեր ժամը չեյիր դալիս, մեկ յերկնքի
տակի, մեկ յերկրի յերեսի եյիր հո
ինձ հեռ կենում, ման դալիս,
տանջվում, աշխատում: Լեզուդ իմը
չէր, պատկերդ, հոգիդ հո իմիցն եր.
մկամ մեկ ցալ չե՞ր, վոր մեզ տան-
ջում եր, մկամ մեկ իշխան չե՞ր, վոր
ինձ ել, քեզ ել դարբեդար արեց,
սերը մեր սրտում մեռցրեց, յերկինք,
արեւ մթնացրեց... Ա՛յ իմ պատկե-
րակից հաղածին, ընչանք յե՞րբ ես

դոռի գարդը մեզ երի, փոթոթի,
սաղ սաղ խորովի, ընչանք յե՞րբ...

Ու Կարապետը չեր գտնում իր հար-
ցի պատասխանը...

Ու Իբրահիմն ել նույն խոսքերն ա-
սաց մյուս ուրը, յերբ Կարապետի
դիակով ամրացրեց ջրանցքի ավերը:
Նույն հարցը տվեց ալ պատասխան
չդատավ...

Ու յերրորդ ուրը Իբրահիմի դիա-
կով ջրանցքի ավերն ամրացնող
քուրդ Հասոն ել միևնույն խոսքերն
ասաց, միևնույն հարցը տվեց և
պատասխանը չդատավ...

Յե՛վ այսպես մեռան Մանսուրն ու
իւր ընկերները... Յե՛վ այսպես իրա-
կանացվեց Մարդարի վաղուցվա լը-
սած հեքիաթը և ջուրը գլգլալեն
թափվեց ալ լցրեց Լաթիֆեյի հա-
մար պատրաստած ավազանը...



VI

Յերեկը ճառագայթածիւղ արեւին եր
ցուցլում ավաղանի ջրերում ու գիշե-
րը լուսնի շողերն եյին սրմայի նման
մտաւովինում ավաղանն ու շրջապա-
տը :

... Շիրաղի բուրյան վարդեր բու-
սան փոքրիկ պուրակում, ու շուշա-
նը բացեց իր թերթերը և մանկան
թարթվող աչիկների պես մեկ մեկ
բացվեցին քրիզանթեմի կոկոնները...
Պտղատու ծառերը փռեցին իրենց
տերեւները և այդ տերեւների վրա
ճուփողյունով թառեցին աղափնիներն
ու ճնճղուկը, ծիծառն ու նռնյիսիկ մի
քանի վարժեցրած սախակները...

Ի՞նչ այդ ամենի շուրջը կանգնեցին
բարձրաբերձ պարխապներ, վոր ոճն
իր պորտով և ոտար հավքն իր թե-
վով չհամարձակի ներս թափանցել
աչդ վայրը, վոր վաչ մի հողեղեն չը-
տեսնի այդ չքնաղ ավազանն ու
նույնքան չքնաղ պուրակը, վոր Սար-
դարը պատրաստել տվեց միայն ու
միայն Լաթիֆեյի համար, վորպեսզի
նա զվարճանա ամեն որ և զվարճանա
լով զվարճացնի իրան՝ Սարդարին:

Ու լուսնի պես հեղ և արեւի նման
այրող Լաթիֆեն չըջեց, տեսավ այդ
ամենն ու մի պահ սքանչացավ այդ ամ-
ենի վրա և սոխակը դալալելով նա-
յում եր Լաթիֆեյին կարծես ցանկա-
նալով հարցմունք անել, թե վո՞րն և
ավելի գեղեցիկ, արդյոք այդ պուրակն
ու ավազանն են գեղեցիկություն տա-
լիս աղջկան, թե աղջիկն ամենին այդ
հարցն եր տալիս յուրովի նաև Սար-
դարը և վոչ վոք դրա պատասխանը
չեր գտնաւ: Բայց Լաթիֆեյի սրը-
տում ուրախ անկյուն չկար և քիչ հե-

այս ամեն ինչ մոռցւից նրա հա-
 մար... արդեն մեկ տարի յեր, վոր
 նա Սարգսարից, ներքինի Սահլրից ու
 մեկ եւ իրեն աղախին նշանակված Նի-
 դարից բացի ուրիշ վոչ վոքի չեր
 տեսնում: Այդպէս եր Սարգսարի կամ-
 քը: Լաթիֆեն սկզբում շատ դիմա-
 դրեց Սարգսարին, շատ համառեց,
 բայց այն բուն կարգաւ, վոր նա
 ուներ դեպի դուրսը, դեպի աղաւ
 կյանքը, դեպի իր Մանսուրը հարկա-
 դրեց. նրան առժամապէս համակերպ-
 վել ամեն ինչի. իցե թե իր համառու-
 թյունը առիթ լիներ, վոր Սարգսարը
 Մանսուրին վոչնչացներ և իրեն եւ
 դիտատեր, իսկ ինքն ուղում եր ապ-
 բել և առաւել ևս ուղում եր, վոր ապ-
 բեր Մանսուրը. ու նա խոսք առաւ
 Սարգսարից, վոր նա խնայի իր հարա-
 դատների կյանքը, վոր ձեռք չտա
 Մանսուրին և ինքը Սարգսարինը կը-
 լինի:

Ու Սարգսարը խոսք տվեց: Յեւ այդ
 խոսքը Սարգսարը տվեց այն որը,

յիւր իր Ֆարրաշին կարդադրեց, վոր
ջրանցքի ափերն ամրացնի Մանսուրի
դիակով...

Ի՞նչ իմանար Լաթիֆեն, թե Սար-
դարը, յերկրի տերն ել կարող ե փո-
ղացային սինքորի սկս մեկ բան ա-
սել և մեկ ուրիշ բան անել. թող ասը-
րեր Մանսուրը և Լաթիֆեն հաստատ
դիտեր, քանի ապրում ե նա, ուրեմն
լինքն ել իրավունք ունի ապրելու և
վոչ միայն ապրելու, այլև հուսալու
թե ահա մեկ որ Մանսուրը կդա և կա
դատի իրեն, ինչպես իրենից առաջ
յեղած Լաթիֆեյին փախցրել ե նրա
սիրածը:

Յեւ ամառային որվա այն սլահին,
յիւր արեւ վրակ եր մաղում չորս
դին, յերբ ամեն արարած փախչում
եր դեպի ստվերը, փոքրիկ պուրա-
կում ավաղանն ու բուրումնավետ ծա-
ղիկները սփռում եյին մեղմ, դուրե-
կան դովություն և Սարդարը Լաթի-
ֆեյի հետ դալիս եր այնտեղ վայելե-
լու հաճույքների հաճույքը, վոր նա

կարդացել եր հեքիաթներում և այսօր իրականություն եր դարձրել:

Ահա, նրանք ներս մտան: Սարդարը հաղել և ճերմակ, թեթև յերկարափուն մի զդեստ, նա դնաց, նստեց տախտանի ավին սարքած փոքրիկ տաղավարում, ուր փափուկ թախտին փռված ռթոցները ծածկված խորասանի շալով ու Սպահանի քիչմիրով շոյում եյին նրա ձեռքերը հաճելի քնքշությամբ: Գալիս և Լաթիֆեն. մեծաքսի նուրբ շրջադդեստի ծալքերի միջից դժողովում և նրա լուսեղեն մարմինը, նա դլխահակ և, բայց աշխատում և աչքերում վառել կրակը, կրակը, վորին այնքան տենդորեն ստատում և Սարդարը... Ահա', Սարդարը նշան տվեց... Լաթիֆեն հասկանում և թե ինչ և ուզում տերը... Նա վրայից նետում և մետաքսի շրջադդեստը և այնպես, ինչպես առաջին կինը յեղեմական դրախտում, այնպես դայթակղիչ ու կախարդական մի սլահ կանգնում և Սարդարի դիմաց, ապա

նրա մարմինը պարուրում և արևի
 լուսածին շողքը և նա նետվում է ա-
 վադանի փրփուրներին մեջ... Նա լու-
 դում է ինչպես կարապետ և ճերմակ
 լուսեղեն պարանոցը հանելով ջրից
 սրորվում է ամբողջ մարմնով ալիք-
 ների հետ... ջուրը խոյանքով հետ ու-
 տառջ և դնում նրա շարժումից...
 Մեկ ալիքը ծածկում է նրա իրանը,
 մյուսը դարնովում է կողերին, մյուս-
 րը կրծքին, ապա հետ դնում նորից ու
 նորից իր խաղը սկսելու տղջկա
 հետ... Մարդարը նայում է, նայում
 անկշտում աչքերով և նորից ու նորից
 բռնկվում է նրա ներսում ցանկու-
 թյան հախուռն կրակը... Այսպես է ա-
 հա այս հեքիաթը... Գերին իջել և
 ջրերի մեջ, խայտում, վստատոտում և
 և թվում է թե ջուրն ու ալիքներն ել
 տարված են բնության այդ սքանչելի
 ռադիոապարծությամբ: Յեվ Մարդա-
 րին թվում էր, թե Մարդարեյի խոս-
 տացած յերանության այն վայրկյանն
 է, վեր ապրում է ինքը, քանզի վո՞ր

դրախտում և վո՞ր Մարգարեն կա-
 րող և ստեղծել այդպիսի կատարելու-
 թյուն ինչպիսին Լաթիֆեն եր. նրա
 սքանչելադուլն մարմնի վրա չկար և
 վոչ մի անկանոն դիժ, չկար և վոչ մի
 բիժ, վո՞ր ամենապիտքը իսկ չափով նը-
 սեմացներ նրա տեսքը: Այդ վողորկ
 ու ճկուն իրանը, այդ ամուր կլորիկ
 ստինքները, վո՞րոնց պտուկները թուխ
 խաղողի պես մեկ մեկ բողբո-
 ջուլ եյին՝ ամեն նայելիս նոր փայլ,
 նոր հրապույր եյին ստանում և Մար-
 ցարը ներքին տաղնապով այլևս խան-
 դում եր, և՛ արեւիկն, վո՞ր այնպես
 շեշտակի իջնում եր Լաթիֆեյի վրա,
 և մանավանդ ալիքներին, վո՞րոնք այն
 սէս պիրկ դրկում եյին իրար և մեկը
 մըցում եր մյուսի հետ ավելի առաջ
 նետվելու, ավելի ջերմորեն սեղմելու
 Լաթիֆեյի իրանը. և ինչ դաժան կռիւ
 և տեղի ունենում ալիքների մեջ.
 ու ալիքների այդ կռիւի դիմաց Մար-
 ցարը հանդիստ չեր կարող մնալ իր
 տեղում: Նա իջաւ տաղաւարի թախ-

Թից, ձեռքը յերկարեց դեպի ամա-
 ղանը, բռնեց Լաթիֆեյի հոլանի թե-
 վից... վա՛հ, վա՛հ, իրական ե... Նա
 յե, մարմնավոր աղջիկ և վա՛հ վա՛հ,
 վա՛հ վա՛հ չի կարող խլել նրան իրե-
 նեց... Նա աղջկան դուրս ե քաշում
 ամաղանից, ջրի կաթիլները բողբո-
 ջել են նրա վրա մոռմանն... ամբողջ
 դեմքը, պարանոցը, կուրծքը, իրա-
 նը ծածկված եր հատ-հատ կաթիլնե-
 րով և այդ կաթիլներն մեջ շողում
 են արեվի ճառագայթները. թվում և
 թե նա զարդարված և արևահյուս
 մարդարիտներով ու Սարդարը յեր-
 կարտեն սքանչացած և այդ տեսարա-
 նով. այժմ նրան սպասում և այլ հա-
 ճույթ, նա բարակ շղարչը նետում և
 աղջկա վրա, թոցնում և դեպի իր ա-
 պարանքի ընդարձակ դահլիճը, ուր
 նույնպես վա՛հ մի ոտար վրա չի կե-
 խում. Լաթիֆեն մի սլահ հանդստա-
 նում և և քիչ հետո դարձյալ վրա չի
 վրա յե... բարակ շղարչը դցած ուսե-
 րին նա կանգնում և սենյակի մեջտե-

Կր... Հեռվից լսվում է մի մեղմ պա-
 րի յեղանակ... այս անգամ արդեն
 լաթիֆեյի աչքերում իջնում է խոր
 թախիծ, նա հետ է դրում գլուխը,
 կտրտառով նայում է լուսամուտից
 դուրս, ուր միայն անսահման ու ան-
 ճայրածիր տարածությունն է փռված
 և վոչ վաք, վոչ վոք չի յերևում ու
 չի կարող յերևալ... Նա հետզհետե
 բարձրացնում է թևները ու շարժ-
 ւում ընդարձակ դահլիճում... Նա
 պարում է։ Այդպես և այժմ Սարգսրի
 կամքը... նորից ճկվում է նրա իրա-
 նը, նորից սրբանոցը նազանքով խո-
 յանում է վեր, հռիփի թևները թա-
 փահարում են ավելի արագ և շող
 մատներով նա շղարչի ծայրերը բռն-
 անձ ֆուռացնում է իր շուրջը և այն-
 պես թեթև և սահում նրբահյուս դոր-
 դերի վրայով, վոք թվում է թե ահա
 նա թռչունների նման թևի կառնի,
 կոյանա հեռո՛ւն, հեռո՛ւն... Ու պա-
 րում է լաթիֆեն, պարում է ջեն-
 նաթի պարը,—մտածում է Սարգսրը։

...Յեա պարում եմ տանջանքի սլա-
րը, մահվան պարը, — մտածում ե
լաթիֆեն և հետզհետե նրա թեմերը
կամադուրիկ են դառնում, հետզհետե
իրանը թուլանում և, սլարանոցը խո-
նարհվում ե սեաթույր պայծառ աչ-
քերից ցողում են յերկու կաթիլ ար-
ցունք... Նա այլևս կանգնում ե իր
տեղում և միայն շղարշն ե, վոր այս
տեղում սկսածա ֆուռում ե նրա չորս
կողմը և այդ շղարշի արանքից նրա
մարմինը յերևում և ինչպես վարդա-
ջրով ոծված մի նրբին զանգված, վո-
րից բուրում ե բուրմունքների բուր-
մունքը, վորը չի կարող բուրել և վոչ
մի դրախտային ծաղիկ, ինչպիսի տո-
սվածային ձեռք ել տնկած լինի
այն... Ու Մարգարն այլևս անհամ-
բեր ցատկում ե տեղից, հետ ե նե-
սում շղարշը, դրկում նրա ճկուն ի-
րանը, կրծքին ե առնում նրա դլուխը,
քաշում ե դեպի իր վթակեղոծ մահճա-
կալը ու փակում աչքերը և նրան յե-
րեկում ե դրախտը նոր հրաշալիքնե-
րով, նոր ու անհադուրդ վայելքնե-
րով...

VII

... Սարգսարը յելալ դահլիճից հա-
զէցած յերկրային ջեննաթի, ամենա-
նվիրական ջեննաթի պարգևով՝ ու
յերբ անցալ սրահը, նրան մոտեցալ
ներքինի Սահիբը և խոնարհ գը-
լախ տալով զեկուցեց.

— Տե՛ր, քիչ առաջ մեռալ Սիմի-
դարը... յերեք անգամ արևի լույս
կնդրեց և յերեք անգամ ել մերժեցի՝
անսալով ձեր իմաստուն խորհրդին:

— Ինձ հետ խոսել միայն վողջ մը-
նացածների մասին, — լորոտաց Սար-
գսարը, չցանկանալով սովերել իր վա-
յելած յերանությունը...

— Մյուս յսթը խանութները նույն-
օրէս խնդրում են իրենց լույս աշ-
խարհ թողնել... Ի՞նչ կը հրամայեն
ձեր աստվածային շրթունքները...

— Սարգսարին խնդրել հարկավոր
չէ... Սարգսարը դեռեւ ինքն ինչ ժամա-
նակ և հարկավոր:

— Ձեր բերանով ինքն խմաստան-
թյունն և խոսում, տե՛ր, — ասով Սա-
հիրը ու խոնարհ դլուխ տալով հեռ
դնաց:

Վե՛րջ, հատակ չունի Սարգսարի ցա-
սումը... վեց և դարձյալ վեց տ-
միս թոյ մնան նրանք առանց արեւի,
վեր հասկանալով թէ ինչ և նշանակում
ըմբոստանալ Սարգսարի դեմ, փախչել
սողարանքից: Փախած Լաթիֆէյի փո-
խարեն թող տանջվեն մնացածները և
այն ժամանակ նրանք շատ հնազանդ
կլինեն... Առայժմ Սարգսարին բավա-
րարում և նոր Լաթիֆէն... և նա վը-
րիժառու եր լինում մյուսներից...

Անցան որեր ու Լաթիֆէն հետըզ-
հեռեւ մուսլիմ եր աւ թախիծը պա-

տում եր նրան յինչպէս դաշկությունը
 պատում և աշնան տերեւներին...
 Որեք, շարաթներ ու ամիսներ շա-
 րունակ նա կրկնում եր նույն արարո-
 զությունը Սարգսարի համար, ընկ-
 նում, ներքին զգլանքով ընկնում նը
 րա բազուկներում և ամեն անգամ ի-
 րեն մխիթարում նրանով, վոր այդ
 բոլորն ինքն անում և միայն ու մի-
 այն Մանսուրի համար, վոր մի ար
 պիտի դա Մանսուրը աղաւթի իրեն և
 ինքը կազատվի այդ տանջալի լո-
 գանքից ու պարից և մանավանդ Սար-
 ցարի մահատարուստ զգլանքից...
 Ջրի ալիքների մեջ նա տեսնում եր
 նրան՝ Մանսուրին: Յերբ . պարեկիս
 թափահարում եր շղարչը, թվում եր
 թե ահա, ահա Մանսուրի հետ թըռ-
 չում և սարերով ու ձորերով դեպի
 ազատություն և ամեն անգամ Սար-
 ցարի զրկում մխրճվելով թվում եր
 թե դա վերջին տուրքն և, վոր պիտի
 տա ու այլևս ազատվի նրանից...
 Բայց յեկտով մի ար, վոր այլևս այդ

նապրումները նրան չէյին բավարարում, վոր դարհուրելի դարձաւ Սարդարի ստվերն անդամ ու դարչելի ներքինին ու աղախինը, վորոնց միայն իրավունք ունէր նա տեսնել... Արեւ, իսկապէս արեւ և ուղում նա տեսնել, դաշտ, կանաչ ու ծաղիկ, իսկապէս դաշտ, կանաչ ու ծաղիկ և ուղում տեսնել նա, Զանդուն, իսկապէս Զանդուն և ուղում տեսնել նա և այդ ամենի հետ իրեն՝ Մանուրին...

Յեւ հորդեցին արցունքները վար ու անդադրում, ինչպէս հարդում և Զանդուն դարնանը և Լաթիֆէյի ներսում բոցավառվեց ազատության կարոտը. նա դահլիճի միակ լուսամտովից նայում եր դուրսը. մի սլահ դլուխը դուրս հանեց և ներքեում խորը, շատ խորը, ամհհի ժայռերի խորքից հաղիւ լսելի դարձաւ ինչ վոր խշռոց. այո՛, Զանդուն եր, Զանդուն, վորը Լաթիֆէյին թվում եր թէ նւշնպէս լալիս և, այնքան աղեկըտուր, այնքան խորքից եր դալիս նը-

րա ձայնը, թվում եր թե դետը չըն-
 չահեղձ եր լինում... վո՛չ վոք սիրտ
 չեր տնեւ մալարանքի շրջապատում
 ման դալ և այդ պատճառով Լաթի-
 ֆենն վոչ վոքի չեր տեսնում... Լա-
 թիֆենն հայացքը սեւեռեց, նայեց հե-
 ուուն և նրան ել, ինչպես վերջին ան-
 դամ Մանսուրին, թվաց թե Արարա-
 աի կատարից փրթած դալիս և մի
 թուխ ամպ: Ամպը դալիս և հապճե-
 պով, հալածված հողմից... ահա՛, ա-
 հա՛ նա մոտեցավ, նա նման և հեքիաթ
 ներում գրված կախարդական գոր-
 դին... Ահա այդ գորդը կդա, կը
 փռվի իր լուսամտտի դիմաց. ինքը
 կթռչի, կնստի կախարդական գոր-
 դին. գորդը նրան կփախցնի դեպի
 այդինները, ինքը հենց գորդի վրայից
 խմաց կտա Մանսուրին, նա ել կը-
 թռնի կը նստի իր կողքին և իրենք
 կերթան հեռո՛ւ-հեռո՛ւ կողմեր, ուր
 ադատ ու ընդարձակ ծովեր աւ ցա-
 մաքներ կան, ուր Սարգսար չկա, ուր
 կարելի չե սիրել սիրած մարդուն ու

սիրվել սիրված մարդուց... Ահա՛ ,
ահա՛ ամպեղեն զորդը մոտեցալ... Լա-
թիֆեն սլափափափում է թռչել տե-
ղից , բայց այդ սլահին մի ձեռք դիպ-
չում է նրա ուսին և կախարդական
զորդը չքանում է . նա հետ է դառ-
նում : Սարգսրն և կանգնած նրա դի-
մաց :

— Գնա՛նք ,— ասում է Սարգսրը ,
— Գնա՛նք Լաթիֆե , գնա՛նք... Յես-
յեղա ավազանում ու սլուրակում
և ավազանն ել , սլուրակն ել տխուր
էյին առանց քեզ... Գնա՛նք , ալիքները
քեզ են սպասում , գնա՛նք վարդենին
ծողկել և և առանց քեզ նա հոտ չու-
նի...

— Վո՛չ ,— քայտականչում է Լաթի-
ֆեն ,— յես կուղեմ լողանալ իսկական
Զանդուկի մեջ :

— Վո՛չ , դու կլողանաս միայն ինձ
համար և վոչ մի հողեղեն չպիտի տես
նի քեզ :

— Յես կուղեմ լողալ ինձ համար :

— Լաթիֆե՛ :

— Սարգսար, ամենակարող Սարսար, ասա քեւր ե իմ Մանսուրը...

— Ա՛խ, քո Մանսուրը, — ասալ ու կանգնեց Սարգսարը:

Այն որից, յերբ Լաթիֆեն յենթարկվել էր իրեն, յերբ ինքը խոսք եր տըվել թե Մանսուրի կյանքին ձեռք չի տա, Լաթիֆեն չէր տվել Մանսուրի անունը... և թվում եր թե աղջիկը մոռացել ե նրան... Ա՛հ, ուրեմն, ի՞նչ, խարուսի՞կ եր, քւրեմն աղջիկն իր սրտի անկյունում դեռ տեղ եր պահում նրա համար, վո՛ւչ, վո՛ւչ, Սարգսարը կհայտնի ամեն ինչ և թող Լաթիֆեն իսպառ կտրի իր կապը, թեկուզ սրտի դադանի կապը դրսի հետ և նա ասաց.

— Մանսուրը չի հիշում քեզ այլևս:

— Զի կարող պատահել. դու սըտում ես:

— Նա չի հիշում քեզ, նրա դեխակով յես ամրացրի ջրանցքի ասիերը, վոր ջրանցքն ամուր լինի, վոր ջուրն անխափան դա ու լցվի ավազանը, ուր

դու լսողանում ես քո տիրոջ համար...

— Մանսուրին, դո՞ւ... ախ, դա-
դան, սառը խարեբա... դե շուտ ասե-
լիր, ել ինչո՞ւ համար եմ յես աղ-
րում... Հե՞ մոր այս ամենը նրա
համար եր, ի՞նչ կարող եր թե՛ տալ
ինձ դիմադրելու այս տանջանքներին,
քան այն հույսը, մոր մի որ պիտի
տեսնեյի իմ Մանսուրին, լինեյի նրա
հետ, ապրեյի նրա համար...

Յեւ լաթիֆեն վոսոյուճույ թուով
դեպի լուսամուտը:

— Կաց, ցնդած, հիմար աղ-
ջիկ...

— Վոչ, յես հիմա ամիւրի խեղճ
եմ, քան յերբ ե ե... ու ցանկացա՛լ
դուրս վոստնել:

— Կաց— մահն ե քո առաջ, խե-
լադար:

— Թո՛ղ, կյանքն ե իմ առաջ...
Մեռնե՞լ, այո՛... Բայց ուղում եմ
մեռնել ազատության մեջ, ուղում եմ
մոր շունչս խառնվի ազատ, քո շնչով
չպղծված ողին... Թող իմ դիակը

բըքրեն ցին ու անգղը— բայց Սար-
գարի դարչելի շրթունքները թող չը-
դիպչեն ինձ. թող վոր փտեմ ու հող
դառնամ աղատության մեջ և այդ
հողը թող խառնվի այն հողին, վորի
հետ խառնված ե Մանսուրի փտած
դիակի հողը, բայց այլևս Սարգարի
ձեռքերը չեն դիպնի ինձ... Հեռո՛ւ...
Բնության մեջ իմ դերեղմանը չատ և
չատ ընդարձակ կլինի, քան այս
դարչելի դերեղմանը, քան այս կեն-
դանի մեռելների դադադը:

Աստվ Լաթիֆեն, իր հոգում կու-
տակած տակությամբ ու ցասումի
իջղջ նսղկանքով հրեց Սարգարին ու
միակ լուսամուտից իրեն դուրս նե-
տեց... Ամեհի բարձրությունից մին-
չև Ջանգուի ձորը մի քանի անդամ
պտույտ գործեց Լաթիֆեյի մարմինն
ողի մեջ. նրա մետաքսե զգեստը ֆլու-
ռաց նրա չորս ընկերը, ինչպես նրա
յերադած կախարդական գորգը և ա-
պա նա ընկավ ու ջարդվեց ժայռերի
սուրասուր ծայրերի վրա...

Ասում են, Վոր Մանսուրի ու Լաթի-
 Փեյի սիրո դադանիքն իմացող մար-
 դիկ Վերջում դտան Լաթիֆեյի ջարդ-
 ված մարմնի մնացորդները և Սար-
 դապից ծածուկ, տարան Թադիցին
 Մանսուրի դիակի մոտ՝ այն ջրանցքի
 ափին, Վորը Սարդարը կառուցեց ի-
 րա՝ Լաթիֆեյի բռնադատված սերը
 վորսալու համար...

18 ապրիլի 1935 թ.

Յերևան



ՍԻՐԱՍԻ ՍՏԵՂԾԱԴՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ,

1. ՀԱՐՅՐԵՔ ՆՐԱՆՅ.— Վեպ, 1931 թ.
Խոսկվա, ԽՍՀՄ ժողովուրդների հրատա-
րակչություն (սպառված)
2. ԿՅԱՆՔԻ ԿԱՐՈՏԸ.— Վիպակներ, պատմ-
վածքներ: 1934 թ. Յերեան, ՀՍԽՀ Պետ-
հրատ. գիմը 3 ռ.:
3. ՄԱՄԵՆ ՈՒ ԱՇԵՆ.— Հ. Շավարշի մը-
կարներով, 1934 թ. Պետհրատ, Յերե-
վան. գիմը 1 ռ. . մույճը քղերեմ լեզ-
վով. Պետհրատ, 1935 թ. գիմը 30 կ.:
4. ԼԱԹԻՅԵ.— (Արևելյան տեսիլ):

ԳԱԱ Հիմնարար գիտ. գրադ.



FL0047279

[204.]

2162 60 4.

487

A $\frac{7}{948}$



СИРАС
ЛАТИФЕ
(ВОСТОЧНОЕ ВИДЕНИЕ)
Глз ССРА 1925